

**ՀԵՌԱՀԱՐ ԵՂԱՆԱԿՈՎ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԻ «ՍՄԱՐԹ» ՀԱՇՎԻ/ԱՅՍՈՒՀԵՏ՝ ՀԱՇՎԻ/ ԲԱՑՄԱՆ ԵՎ  
ԻՆՏԵՐՆԵՏ/ՍՈՒՄՅԼ ԲԱՆԿԻՆԳԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱՂԲՄԱՆ  
ՀԱՅՏ-ՊԱՅՄԱՆԱԳԻՐ/ԱՅՍՈՒՀԵՏ՝ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ/**

**1. ԾԱՆՈՒՑՈՒՄՆԵՐԻ ՍՏԱՑՄԱՆ ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆ**

- 1.1. Սույնով հանձնարարում եմ Բանկին ինձ հետ հաղորդակցվել իմ կողմից Բանկին տրամադրված հետևյալ եղանակներից որևէ մեկով, այն է՝ էլեկտրոնային փոստի հասցեին կամ հնարավորության դեպքում Ինտերնետ-բանկ համակարգի իմ էջին Պայմանագրի հետ կապված ծանուցումներ, այդ թվում նաև պահանջագրեր, նախապահանջներ, արտադատական բռնագանձման և դատական ծանուցումներ, Բանկի կողմից Հաճախորդին ուղղված գրավոր պատասխաններ, քաղվածքներ, Բանկում գործող պայմանների ու սակագների փոփոխման, կողմերի միջև հաղորդակցման կարգի կամ Կողմերի իրավունքների, պարտականությունների կամ պատասխանատվության սահմանման, փոփոխման կամ դադարեցման մասին տեղեկատվություն, Բանկի կողմից իմ վերաբերյալ վարկային բյուրոյին կամ ՀՀ ԿԲ վարկային ռեգիստրին տեղեկատվություն տրամադրելու մասին ծանուցում, ինչպես նաև ՀՀ օրենսդրությամբ նախատեսված այլ տեղեկատվություն /այսուհետ՝ առանձին-առանձին կամ բոլորը միասին՝ ծանուցում/ ուղարկելու/հասանելի դարձնելու միջոցով: Ընդ որում, մեկ եղանակով ծանուցումն ուղարկելու դեպքում Բանկը պարտավոր չէ ծանուցում իրականացնել նաև այլ այլընտրանքային եղանակներով՝ անկախ այն հանգամանքից հաճախորդը ծանուցումը ստացել է, թե՛ ոչ:
- 1.2. Սույնով հրաժարվում եմ սույն Պայմանագրով, ինչպես նաև ՀՀ օրենսդրությամբ նախատեսված որևէ ծանուցում փոստային առաքման միջոցով ստանալու իմ իրավունքից, բացառությամբ այն դեպքերի, երբ սույն Պայմանագրով փոստային առաքումը սահմանված է որպես տեղեկատվության ստացման եղանակ: Սույն կետում սահմանված պայմանի հետ անհամաձայնության դեպքում սույն Պայմանագրով սահմանված ծառայությունը ստանալու և փոստային առաքումը, որպես սույն կետում նշված ծանուցման ստացման եղանակ ընտրելու համար անհրաժեշտ է այցելել Բանկ:
- 1.3. Սույնով հայտնում եմ իմ համաձայնությունն առ այն, որ Պայմանագրից բխող վեճերի լուծման կամ Կողմերի իրավունքների ու պարտականությունների իրականացման ժամանակ, դատարանը, պետական մարմինները և այլոք Բանկի պահանջով կարող են կիրառել ինձ հետ հաղորդակցման/ծանուցումների ներկայացման/ուղարկման սույն Պայմանագրով սահմանված կարգը:
- 1.4. Ինձ ուղղված ծանուցումները իմ կողմից Բանկին տրամադրված էլեկտրոնային փոստի հասցեին ուղարկվելու դեպքում ես կհամարվեմ պատշաճ ծանուցված:
- 1.5. Ինձ ուղղված ծանուցումները իմ պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեին<sup>1</sup> ուղարկվելու դեպքում ես կհամարվեմ պատշաճ ծանուցված, երբ առկա է այն ուղարկելու մասին էլեկտրոնային հավաստում, եթե նույնիսկ բացակայում է այն կարգալու մասին էլեկտրոնային հավաստումը: Վերջին դեպքում ես կհամարվեմ պատշաճ ծանուցված ծանուցումն ուղարկելուն հաջորդող 5-րդ /հինգերորդ/ օրվանից:

<sup>1</sup> Ֆիզիկական անձին նույնականացման քարտի հետ մեկտեղ ՀՀ կառավարության սահմանած կարգով տրված էլեկտրոնային փոստը

- 1.6. Մույնով ես հայտնում եմ իմ համաձայնությունն առ այն, որ ծանուցումների վերը նշված եղանակը և կարգը Բանկը կարող է կիրառել իմ կողմից պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպք/եր/ում, արտադատական բռնագանձման ծանուցումներ/ պահանջագրեր/ նախապահանջներ/ նյութեր/ փաստաթղթեր ներկայացնելու ժամանակ:
- 1.7. Մույնով հավաստում եմ, որ ինձ ծանուցման լիարժեք այլընտրանքային եղանակ կարող է հանդիսանալ նաև ձայնագրվող և արձանագրվող հեռախոսային կապի միջոցը կամ SMS հաղորդագրությունը, որով ես տեղեկացվում եմ Պայմանագրով սահմանված կարգի պահպանմամբ ինձ ուղղված գրավոր ծանուցման հասանելիության մասին:
- 1.8. Մույնով հայտնում եմ իմ համաձայնությունն առ այն, որ Բանկը, որևէ հիմքով սույն Պայմանագրով սահմանված ծանուցման եղանակ/ներ/ով ծանուցումն իրականացնելու անհնարինության դեպքում, կարող է որպես բարի կամքի դրսևորում իր հայեցողությամբ որպես ինձ ծանուցման լիարժեք այլընտրանքային եղանակ կիրառել ցանկացած հասցե/կապի միջոց/հեռախոսահամար, որը ես նշել եմ Պայմանագրում կամ այլ գրավոր եղանակով տրամադրել եմ Բանկին:
- 1.9. Ես կրում եմ իմ պաշտոնական էլեկտրոնային փոստին կամ իմ կողմից Բանկին տրամադրված էլեկտրոնային հաղորդակցության միջոցներին ուղարկված ծանուցումը չկարդալու, ինչպես նաև Բանկի և իմ միջև հաղորդակցման համար անհրաժեշտ իմ որևէ տվյալի փոփոխության վերաբերյալ Բանկին չտեղեկացնելու արդյունքում վրա հասնող բոլոր անբարենպաստ իրավական հետևանքների ռիսկը:
- 1.10. Եթե այլ բան նախատեսված չէ Պայմանագրով կամ Կողմերի գրավոր համաձայնությամբ, սույնով հայտնում եմ իմ համաձայնությունն առ այն, որ ես համարվում եմ պատշաճ ծանուցված Պայմանագրով սահմանված կարգով և/կամ իմ նախընտրած միջոցով տեղեկություններն ինձ հասանելի դառնալու պահից, անկախ այն հանգամանքից, թե ես փաստացի երբ եմ ստանում այն: Ընդ որում, Պայմանագրի հետ կապված ծանուցումներն ինձ առձեռն հանձնվելու պարագայում ես կհամարվեմ պատշաճ ծանուցված՝ հրաժարվելով սույն Պայմանագրով և/կամ «Բանկի և Հաճախորդի միջև հաղորդակցման հանձնարարականով» համաձայնեցված որևէ եղանակով լրացուցիչ ծանուցվելուց:
- 1.11. Մույնով հանձնարարում եմ Բանկին արդիականացնել/թարմացնել «Բանկի և Հաճախորդի միջև հաղորդակցման հանձնարարականում» գետեղված տեղեկատվությունը՝ ըստ սույն պայմանագրի <<Հաճախորդի անձնական տվյալներ>> բաժնում նշված տեղեկատվության, ինչպես նաև հաղորդակցման եղանակ/ներ/ն ու կարգը՝ ըստ սույն Պայմանագրի 1 կետում նշված եղանակ/ներ/ի ու կարգի և արդյունքում իմ և Բանկի միջև հաղորդակցումը բոլոր բանկային ծառայությունների գծով իրականացնել Պայմանագրի 1 կետով սահմանված կարգով :
- 1.12. Մույնով ես ինձ իրավունք եմ վերապահում ցանկացած պահի պահանջել փոփոխել Պայմանագրի հետ կապված ծանուցումների եղանակը՝ Բանկ ներկայացնելով նոր «Բանկի և Հաճախորդի միջև հաղորդակցման հանձնարարական»:

## 2. ՀԱՎԱՍՏԻԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ

**Ստորագրելով և/կամ Բանկ ներկայացնելով սույն Հայտ-պայմանագիրը <<Համաձայն եմ>> վանդակ/ներում նշում/ներ կատարելով, ես՝ Հաճախորդս, գիտակցում եմ, որ.**

- 2.1. Բանկին ներկայացնում եմ պայմանագրի կնքման ակցեպտ, որը բանկ ներկայացվելու և բանկի կողմից ակցեպտը ստանալու վերաբերյալ ինձ պատշաճ ծանուցելու, այն է՝ համապատասխան հաղորդագրություն իմ հեռախոսահամարին ուղարկելու կամ էլեկտրոնային տարբերակով այդ մասին ինձ հայտնելու պահից հանդիսանում է պատշաճ կնքված հաշվի բացման պայմանագիր և ինտերնետ / մոբայլ բանկինգ ծառայության տրամադրման պայմանագիր՝ դրանում նախատեսված պայմաններով: Ամբողջությամբ ծանոթացել եմ իմ կողմից ընտրված բանկային հաշվի և ինտերնետ / մոբայլ բանկինգ ծառայության պայմաններին և հատակ գիտակցում եմ պայմանագրի կնքման արդյունքում ինձ համար վրա հասնող իրավական հետևանքները:

**Ստորագրելով և/կամ Բանկ ներկայացնելով սույն Հայտ-պայմանագիրը <<Համաձայն եմ>> վանդակ/ներում նշում/ներ կատարելով, ես՝ Հաճախորդս, համաձայնում և/կամ հավաստում եմ, որ.**

- 2.2. Ծանոթացել եմ Հայտ-պայմանագրի անբաժանելի մաս կազմող «Ամերիաբանկ» ՓԲԸ կողմից ֆիզիկական անձանց բանկային ծառայությունների մատուցման հիմնական պայմաններին» և «Ամերիաբանկ» ՓԲԸ սակագներին ֆիզիկական անձ հաճախորդների համար» (այսուհետ՝ նշված իրավական ակտերը միասին «Պայմաններ») ընդունում եմ դրանք և համաձայն եմ, որ դրանք Բանկի կողմից կարող են միակողմանի փոփոխվել:
- 2.3. Բոլոր ֆինանսական միջոցները, որոնք փոխանցվում են «Ամերիաբանկ» ՓԲԸ-ում (այսուհետ՝ Բանկ) իմ հաշիվներին, ստացված են օրինական ճանապարհով և ոչ մի կերպ կապված չեն ահաբեկչության ֆինանսավորման, թմրանյութերի վաճառքի, մարդկանց վաճառքի, հարկերի վճարումից խուսափելու և այլ հանցավոր գործունեության հետ:
- 2.4. Բանկն իրականացնի բոլոր անհրաժեշտ գործողությունները, որոնք պահանջվում են ըստ Ահաբեկչության ֆինանսավորման և փողերի լվացման դեմ պայքարի մասին օրենսդրական և ներքին իրավական ակտերի, և միայն հաշվի բացումն արգելող հիմքերի բացակայության դեպքում համապատասխանաբար բացի/ակտիվացնի նշված բանկային հաշիվ/ներ/ը, իսկ հաշիվները բացելուց/ակտիվացնելուց հետո նման հիմքեր հայտնաբերելու դեպքում՝ փակի նշված բանկային հաշիվները և/կամ իրականացնի ՀՀ օրենսդրությամբ և/կամ Բանկի ներքին իրավական ակտերով սահմանված այլ գործողություններ:
- 2.5. Բանկի նկատմամբ որևէ դրամական պարտավորություն ունենալու դեպքում Բանկն անակցեպտ կարգով գանձի նշված առկա պարտավորության գումարը սույն Հայտ-պայմանագրով Բանկում բացվող հաշվին առկա դրամական միջոցներից: Ընդ որում անհրաժեշտության դեպքում արտարժույթի առք ու վաճառքը կիրականացվի տվյալ պահին Բանկում գործող փոխարժեքով:
- 2.6. Իմ կողմից տրամադրված տեղեկությունները ճիշտ են և ամբողջական:
- 2.7. Հայտ-պայմանագրի ստորագրման պահին գործում եմ սթափ մտքով, իմ ազատ կամքի դրսևորմամբ՝ առանց որևէ մոլորության, խաբեության և հարկադրանքի ազդեցության, լիովին հասկանում և գիտակցում եմ իմ կողմից ստանձնվող պարտավորությունների իրավական բնույթը և դրանց չկատարման հետևանքները:
- 2.8. Սույնով տալիս եմ համաձայնությունն առ այն, որ «Ամերիաբանկ» ՓԲԸ-ն, ինձ համար <<Սմարթ>> հաշիվ բացելու և/կամ Բանկի նախաձեռնությամբ իմ վարկավորման հնարավորությունները դիտարկելու և/կամ վարկավորման առաջարկ ներկայացնելու նպատակով, առանց ինձ տեղեկացնելու հարցումներ կատարի և ստանա ներքոնշյալ տեղեկատվությունը.
- 2.8.1. ՀՀ ԿԲ Վարկային Ռեգիստրից և/կամ «ԱՔՌԱՔրեդիտ Ռեփորթինգ» ՓԲԸ-ից, իմ ներկա և անցյալ դրամական պարտավորությունների մասին՝ Բանկում դրամական պարտավորություններ ստանձնելու/ունենալու, երրորդ անձի/անձանց պարտավորությունների երաշխավոր լինելու.
- 2.8.2. «Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն և հիմնադրամից՝ իմ ներկա և անցյալ աշխատանքային գործունեության մասին:

- 2.9. Սույն համաձայնությունն ինձ համար ամբողջությամբ հասկանալի և ընդունելի է, նաև հավաստում եմ, որ սույն համաձայնությունը կիրառելի է վերը նշված նպատակներով, իմ և Բանկի միջև հարաբերությունների ամբողջ ժամանակահատվածի համար:
- 2.10. Բանկը երաշխավորում է Ձեր վերաբերյալ ստացված տեղեկությունների գաղտնիությունը («Բանկային գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի շրջանակներում), ինչպես նաև Ձեր կողմից Բանկին պահանջ ներկայացվելու դեպքում ստացված անձնական տվյալների ուղղումը, ոչնչացումը, մշակման դադարեցումը կամ մշակման հետ կապված այլ գործողության կատարումը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջների պահպանմամբ: Այլ անձանց որևէ տեղեկության տրամադրումը հնարավոր է միայն ըստ Ձեր պահանջի կամ համաձայնության և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ դեպքերում:
- 2.11. Հայտ-պայմանագրի 2.8 կետում նշված համաձայնության հիմքով Բանկի կողմից ստացված անձնական տվյալները Իմ կողմից Բանկին պահանջ ներկայացվելու դեպքում կուղղվեն, կոչնչացվեն, տվյալների մշակումը կդադարեցվի կամ մշակման հետ կապված այլ գործողություն կկատարվի, եթե ՀՀ օրենսդրությամբ և/կամ Բանկի ներքին իրավական ակտերով այլ բան նախատեսված չէ: Ընդ որում, Հայտ-պայմանագրի 2.8 կետում նշված համաձայնությունն ինձ համար ամբողջությամբ հասկանալի և ընդունելի է, նաև հավաստում եմ, որ սույն համաձայնությունը կիրառելի է վերը նշված նպատակներով, իմ և Բանկի միջև հարաբերությունների ամբողջ ժամանակահատվածի համար: